ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"4" փետրվարի 2011թ. №8-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.3-րդ և 1.22-րդ կետերով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի N633-Ն» որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N1187-Ն որոշման դրույթների, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝ մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը մշակել և հաստատել համայնքի քաղաքացիական պաշտպանության նոր պլանները՝ դրանք համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության հետ, իսկ սահմանամերձ համայնքների քաղաքացիական պաշտպանության պլանները՝ նաև համապատասխան զինվորական կայազորի պետի հետ:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի տարածքում գործող կազմակերպությունների (անկախ պետաիրավական ձևից) ղեկավարներին՝ մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը մշակել և հաստատել կազմակերպության քաղաքացիական պաշտպանության նոր պլանները՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության հետ, իսկ սահմանամերձ գոտում գտնվող կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պլանները՝ նաև համապատասխան զինվորական կայազորի պետի հետ:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում գործող (մինչև 100 աշխատող ունեցող) կազմակերպությունների ղեկավարներին՝ մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը մշակել և հաստատել կազմակերպության քաղաքացիական պաշտպանության նոր պլան-ժամանակացույցերը՝ դրանք համաձայնեցնելով Հայաստանի փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության հետ:

4. Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների ղեկավարներին՝ մշակել քաղաքացիական պաշտպանության մարզային նոր պլանները, դրանք համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության և վերադաս հանրապետական ծառայությունների պետերի հետ և մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը ներկայացնել հաստատման:
5. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետին՝
   1) մշակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության նոր պլանը, այն համաձայնեցնել համապատասխան զինվորական կայազորի պետի և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հետ և մինչև 2011 թվականի հուլիսի 1-ը ներկայացնել հաստատման.
   2) կազմակերպել համայնքների, կազմակերպությունների և քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների ղեկավարներին քաղաքացիական պաշտպանության նոր պլանների ու պլան-ժամանակացույցերի մշակման մեթոդական օգնություն ցուցաբերելու աշխատանքները:
6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2011 թ. փետրվարի 4
ք. Կապան